Պայմանագրերում չներառվող՝ առանձին կնքվող արբիտրաժային համաձայնություն՝ առանց կոնկրետ արբիտրների ընտրության

Պայմանագրերում չներառվող՝ առանձին արբիտրաժային համաձայնություն՝ առանց կոնկրետ արբիտրների ընտրության, կնքելու ցանկության դեպքում «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը խորհուրդ է տալիս կնքել արբիտրաժային համաձայնության հետևյալ տարբերակը.

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք . ….. 00.00.201…թ.

«…..» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ Ընկերություն և/կամ Բանկ, ի դեմս ….. մի կողմից և քաղ. (անձնագրային տվյալներ) կամ իրավաբանական անձ (գրանցման համար՝ ….., ՀՎՀՀ՝ …..), այսուհետ՝ Հաճախորդ, մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն արբիտրաժային համաձայնությունը հետևյալի մասին.

1. Կողմերի միջև ….. թ. կնքված համար ….. պայմանագրի և դրա կատարումն ապահովող … թ. կնքված N ….. պայմանագրի կապակցությամբ ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվում է «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին:
2. «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկում գործի քննությունն իրակա-նացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրությանը և «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնակարգին համապատասխան: Ընդ որում, սույն համաձայնագրով հաճախորդը հավաստիացնում է, որ տեղեկացված է «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկում գործերի քննության ընթացակարգին: Վերոհիշյալ նորմատիվային նյութերը տեղակայված են Հայաստանի բանկերի միության ինտերնետային կայքում. www. uba.am, ….. բանկի կայքում, ինչպես նաև դրանք կարելի է ստանալ «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկից, (Ընկերության/Բանկի) գլխամասային գրասենյակից և մասնաճյուղերից:
3. Կողմերը սահմանում են, որ արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է «ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնակարգին համապատասխան:
4. Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման:
5. Վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերին համապատասխան:
6. Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ ք.Երևանը:

7. Սույն համաձայնությունը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմի տրվում է մեկական օրինակ:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ/ԲԱՆԿ **ՀԱՃԱԽՈՐԴ**